«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիամ Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարան (ավագ դպրոց)

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3-4 էջ

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում ....5-11 էջ

Եզրակացություն.....12 էջ

Օգտագործված գրականության ցանկ .....13 էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարը իր գիտակրթական զարգացումներով նոր մոտեցումներ է թելադրում կրթական գործընթացում: Հասարակական կյանքի տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում դպրոցը նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Այսօր դպրոցի կարևոր խնդիրն է աշակերտներին ոչ թե պատրաստի գիտելիք փոխանցել, այլ սովորեցնել մտածել, վերլուծել, քննարկել, իր կարծիքը հիմնավորել, հարցադրումներ անել, բանավիճել, քննադատաբար վերաբերվել այն ամենին, ինչ կարդում են և լսում:

Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադական մտածողության զարգացման տեսությունը:

Ի՞նչ է քննադատական մտածողությունը: Այն մանկավարժական մոտեցում է, որը զարգացել և դարձել է ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա:Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը:

Անհատի իմացական ընկալումը վերափոխելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ինքնուրույն, քննադատական մտածողության զարգացումն է:

Այսօր շատ կարևոր է աշակերտների քննադատական մտածողության ձևավորումը:Տարբեր երևույթների, դեպքերի, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների դիտարկումը, վերլուծությունը, գնահատումը,եզրահանգումը, բանավիճելու մշակույթը շատ կարևոր է անձի քննադատական մտածողության ձևավորման գործում:

Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է:

Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ աշակերտն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր դասընկերների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի, քանզի դասարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա:

Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում:

Հետազոտության նպատակն է պարզել՝ կարևո՞ր է այսօր սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում, և այն կարողանալու՞ է կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում

Քննադատական մտածողության արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Կարևոր է աշակերտին սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ:

Քննադատական մտածողությունը որպես նոր մանկավարժական մոտեցում կիրառվել է տարբեր ձևերով, սակայն հիմնական գաղափարը հետևյալն է՝ սովորողներին դարձնել ուսուցման գործընթացի մասնակից, գիտելիքների պարզ մտապահողից և վերարտադրողից վերածելով դրանք ինքնուրույն ջանքերով ձեռք բերողի և գործնականում կիրառողի, զարգացնել իրենց տեսակետները հիմնավորելու նրանց կարողությունները, սերմանել նրանց մեջ իրենց որոշումներն արժեքավորելու, տեսակետները հիմնավորելու և դրանց համար պատասխանատվություն կրելու ունակություններ: Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է զարգացնել քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողությունն ինքնուրույն մտածողություն է: Երբ առաջադրանքները կառուցվում են քննադատական մտածողության սկզբունքների հիման վրա, ամեն սովորող ձևավորում է իր սեփական պատկերացումները, գաղափարները՝ ելնելով իր իմացական հնարավորություններից: Օրինակ՝ աշակերտներին կարող են առաջարկել կարդալ որևէ ստեղծագործություն, մտածել դրա մասին, ապա քննարկել: Կարևորն այն է, որ սովորողներից յուրաքանչյուրն ինքը որոշի, թե ինչպես մտածի և ինչ եզրահանգումներ անի: **Ինքնուրույնությունը քննադատական մտածողության ամենակարևոր բնութագիրն է:** Գիտելիքը (տեղեկատվությունը) ոչ թե քննադատական մտածողության արդյունք է, այլ դրա խթանը : Այսօր կրթական համակարգն ունի առաքելություն՝ ձևավորել քաղաքացիներ, որոնք ունեն ինքնուրույնություն քննադատաբար մտածելու ինչպես ակադեմիական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող

խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Քաղաքացին, որն ունակ է ինքնուրույն մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, դառնում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը: Ժամանակակից մանկավարժագիտությունը համոզված է, որ դասավանդման ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդների կիրառումը միանշանակ նպաստում է քննադատական մտածողության ձևավորմանը: Երբ աշակերտն ակտիվորեն մասնակցում է ուսումնական գործընթացին, ինքնաբերաբար վերածվում է այդ գործընթացի սուբյեկտի. նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է դասընկերների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը հնչած կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույնպես պետք է պատճառաբանված լինի, քանի որ դասարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու:

Այսօր ուսուցչի ուշադրության կենտրոնում մշտապես պետք է լինի աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Այսօր շատ կարևոր է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Ուսուցիչը պարտավոր է աշակերտին քննարկումների միջոցով դրդել վրճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստանձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն:Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը:

Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ ընդունել դիմացինի փաստարկները և փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր փոքրիկ ներդրումը:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Ավագ դպրոցական տարիքում քննադատական մտածողության զարգացումն առավել է կարևորվում. պատանեկության կենսափուլում առաջնային են դառնում կենսական խոր բովանդակությամբ հարցադրումները, մասնագիտական կողմնորոշումները, աշխարհի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, ինքնահաստատման, ինքնադրսևորման, ճանաչողական գործունեության նոր ձևերի տիրապետման պահանջմունքը, որոնք պահանջում են քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտություն:

Այս տեսանկյունից կարևոր են խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը, խմբային աշխատանքի խրախուսումը. աշխատանքը փոքր խմբերում թույլ կտա առավել վստահ լինել ու նեղ շրջանակում արտահայտել կարծիքը. խմբային աշխատանքների ժամանակ կհամադրվեն խմբի անդամների անհատական տեսակետները, իսկ տվյալ աշակերտը ձեռք կբերի համարձակություն և կունենա վստահության զգացում: Ավագ դպրոցում գրականության դասերին

սովորողների քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները, աշխատանքի ձևերը՝

- ✓ սովորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու, պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն,
- ✓ գրական երկի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը,
- ✓ տեքստի առանցքային գաղափարի առանձնացումը, վերլուծությունը, ընդհանրացումը, կենսական իրավիճակներից կամ անձնային փորձից վերցված օրինակներով մեկնաբանումը, ստեղծագործաբար զարգացումը, կանխատեսումը, անդրադարձը, ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է կրել բազմազան բնույթ՝ քննադատական կարծիք, վերլուծություն, հավանություն, հերքում, ներկայացում, գնահատում, հիմնավորում, ապացուցում,
- ✓ միևնույն թեմայի վերաբերյալ պատմողական, նկարագրական, դատողական շարադրանքները, ուսումնահետազոտական նախագծերը, խմբային քննարկումները, դերախաղերն ու գործնական խաղերը և այլն:

Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ:

Քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է բաց հարցերի կիրառումը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի

հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ:

Բաց հարցերը մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Ինչու՞ է կարևոր քննադատական մտածողության զարգացումը դպրոցում:

Սա նպաստում է սովորողների ակտիվության մեծացմանը, անհատական նախաձեռնությունների դրսևորմանը, գլխավորն առանձնացնելու կարողությունների ձևավորմանը, նպատակ դնելու և դրան հասնելու ուղիների որոնման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խմբերով աշխատելու (համագործակցային) մշակույթի ձևավորմանը, շփման և հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Արդյո՞ք յուրաքանչյուր մարդ կարող է քննադատաբար մտածել: 14-16 տարեկանում մարդու մոտ ստեղծվում են քննադատական մտածողության զարգացման համար լավագույն պայմանները: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այդ հմտությունները բոլորի մոտ նույն չափով են զարգացած: Որպեսզի աշակերտը կարողանա օգտվել սեփական քննադատական մտածողությունից, նրա համար կարևոր է զարգացնել մի շարք հատկանիշներ:

1. Պլանավորման պատրաստակամություն. մտքերը հաճախ առաջանում են քաոսային ձևով. կարևոր է համակարգել դրանք, կառուցել շարադրանքի հաջորդականությունը: Մտքի համակարգումը ինքնավստահության նշան է:

2. Ճկունություն. եթե աշակերտը պատրաստ չէ ընկալել ուրիշների գաղափարները, երբեք չի կարող դառնալ սեփական գաղափարների գեներատոր: Ճկունությունը թույլ է տալիս չշտապել դատողություններ անելիս՝ մինչև առավել ամբողջական տեղեկատվություն չունենալը:

3. Հաստատակամություն. բախվելով դժվար խնդրի՝ հաճախ մենք հետաձգում ենք լուծումը. զարգացնելով հաստատակամությունը՝ մենք կարողանում ենք դուրս գալ ստեղծված իրավիճակից:

4. Պատրաստակամություն՝ սեփական սխալները ուղղելու. քննադատաբար մտածող մարդը չի արդարացնում իր սխալ որոշումները, այլ անում է ճիշտ եզրակացություններ:

5. Գիտակցում. ենթադրում է մտածողական գործունեության ընթացքում սեփական մտքերի դիտարկման հմտություն:

6. Փոխզիջումային լուծումների որոնում. կարևոր է, որ ընդունված որոշումներն ընկալվեն այլ մարդկանց կողմից, հակառակ դեպքում դրանք այդպես էլ կմնան չիրագործված :

Քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են դասավանման մեթոդները: Առանձնացվել են ուսուցման երկու՝ անհատական և համագործակցային մեթոդ՝ արդյունքում պարզելով, որ այն աշակերտները, որոնք մասնակցել են դասարանային քննարկումներին, խմբային աշխատանքներին, այսինքն՝ նյութի համատեղ յուրացման գործողություններին, ի տարբերություն մյուսների՝ քննադատական մտածողության զգալիորեն լավ ցուցանիշներ ունեն: Փաստորեն, սովորելու համագործակցային մեթոդն աշակերտներին առավել լայն հնարավորություններ է տալիս գաղափարները վերլուծելու, գնահատելու համար: Եվ այսպես, կարելի է եզրահանգել. եթե անհատը ցանկանում է մասնակցել որևէ խնդրի քննարկմանը, ապա նրան անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ խնդրի մասին և խնդրի ընկալում, որն էլ իր հերթին հիմք կծառայի քննադատական մտածողության հմտությունների զարգացման համար:

Քննարկումն ու բանավեճը քննադատական մտածողության զարգացման կարևորագույն միջոցներից են համարվում:

Փորձենք մի քանի դասերի օրինակներով ցույց տալ սովորողների քննադատական մտածողության զարգացումը հայ գրականություն առարկայի ուսուցման գործընթացում:

Ավագ դպրոցի 11-րդ դասարանում ծրագրային նյութ է Դ.Դեմիրճյանի <<Վարդանանք>> պատմավեպի ուսուցումը: Կերպարների վերլուծության ընթացքում հետաքրքիր բանավեճ է կազմակերպվում: Դասարանը բաժանվում է երկու խմբի . աշակերտների մի մասը Վարդան Մամիկոնյանի կողմնակիցներն են, այսինքն՝ Վարդանանք, մյուս մասը Վասակ Սյունու կողմնակիցներն են՝ Վասակյանք:Դասարանի աշակերտների մի մասը հիմնավոր փաստերով արժևորում է Վարդան Մամիկոնյանի գործողությունները, մյուս խումբը Վասակ Սյունու գործողություններին է համամիտ:Հետաքրքիր բանավեճ է ստացվում, որտեղ աշակերտները փորձում են իրենց կարծիքները հիմնավորել, ինքնուրույն

տեսակետներ ներկայացնել, ստեղծված իրավիճակում ելքեր առաջարկել, քննադատաբար մոտենալ առաջ քաշված շատ հարցերի:

Գրիգոր Զոհրապի նովելների ուսուցումը խմբային աշխատանքի մեթոդով: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է մեկ նովել՝ <<Ճիտին պարտքը>>, <<Զաբուղոն>>,<<Երջանիկ մահը>>: Նախապես մի քանի հարցեր են առաջադրվում.

1.Աշակերտները մինչև ինքնասպանությունը հանդիպում են Հուսեփ աղային և խոսում նրա հետ:

2.Փորձում ենք օգնել Զաբուղոնին և Վասիլիկին. նրանք մեր օգնության կարիքն ունեն: Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք: Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել:

3.Ճի՞շտ արեց արդյոք <<Երջանիկ մահը>> նովելի հերոսուհին,որ չլսեց բժիշկի խորհուրդներին և ընդամենը 40 տարեկանում մահացավ: Արդյո՞ք ընդունելի ավարտ էր: Ի՞նչն էր կարևոր:

Հովհ.Թումանյանի <<Փարվանա>> բալլադում առաջ քաշված հավերժական սիրո գաղափարի շուրջ էլ հնչում են տարբեր կարծիքներ և տեսակետներ. ծավալվում է բանավեճ: Աշակերտները մի պարզ բան են փաստում. կա թե չկա հավերժական սեր՝ դժվար է ասել, բայց կասկածից դուրս է, որ կա այդ սիրո հավերժական ձգտումը:

Եզրակացություն

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք, կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի: Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: **Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/ :** Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ,կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում, կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Կարևորվում է քննադատաբար մտածող մարդու հետևյալ հատկանիշները. այդպիսի մարդը կարողանում է լուծել խնդիրները, համառություն է ցուցաբերում խնդիրների լուծման հարցում, վերահսկում է իրեն, բաց է այլ գաղափարների համար, կարողանում է լուծել խնդիրները՝ համագործակցելով այլ մարդկանց հետ, կարողանում է լսել զրուցակցին, հանդուրժող է անորոշությունների նկատմամբ, կարողանում է խնդիրները դիտարկել տարբեր տեսանկյուններից, կարողանում է զուգորդական կապեր հաստատել երևույթների միջև, հանդուրժող է իր տեսակետից տարբերվող տեսակետների նկատմամբ, կարող է դիտարկել խնդրի լուծման մի քանի հնարավորություններ, կարողանում է կառուցել տրամաբանական եզրակացություններ, մտածում է իր զգացմունքների մասին, գնահատում է դրանք, կարողանում է կանխատեսել, հիմնավորել դրանք և մտածված նպատակներ դնել:

Օգտագործված գրականության ցանկ

1 Ա. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, 2012թ.:

2. Գ. Հակոբյան, Ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում, 2019թ.:

3. Ռ. Խաչատուրյան, Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում, 2019թ.: